

# Բնաւ ոչ տեղին

## հեղինակ՝ Էռնեստ Հեմինգուեյ

### Թարգմանիչ՝ Նինա Ա. Ջաղինյան

Չորս լիրայով, որ վաստակեց հիւրանոցի այգին փորելով, Պեդրուցցին լրիւ հարբեց: Նա տեսաւ ծառուղիով անցնող երիտասարդ ամերիկացուն ու սկսեց խորհրդաւոր ձեռով խօսել հետը: Երիտասարդը պատասխանեց, թէ ինքը դեռ չի նախաճաշել, բայց հաճոյքով հետը կը գայ, հենց որ աւարտի ուտելը: Ասենք՝ քառասուն րոպէից կամ մի ժամից, ոչ ուշ:

Cantina<sup>[1]</sup>ում՝ կամրջի մօտ Պեդրուցցին պարտքով եւս երեք բաժակ grappa<sup>[2]</sup> տուեցին. չէ որ նա այնքան համոզուած ու բազմանշանակ էր խօսում իր առաջին վաստակի մասին: Օրը քամոտ էր, եւ արելը դուրս էր լողում ամպերի տակից, թաքնուում, յետոյ սկսեց անձրեւ կաթկթել: Հրաշալի օր էր կարմրախայտ բռնելու համար:

Երիտասարդ ամերիկացին դուրս եկաւ հիւրանոցից, եւ Պեդրուցցին հարցրեց, թէ կեռիկներն ինչ անի: Հարկ կա՞յ, որ կինը կեռիկներով առանձին գայ:

— Հա՛,— ասաց Պեդրուցցին,— թող Signora՞ն առանձին գայ:

Երիտասարդը վերադարձաւ հիւրանոց եւ խօսեց կնոջ հետ: Նա ու Պեդրուցցին ճամփայ ելան: Ամերիկացու ուսին musette<sup>[3]</sup> կար: Պեդրուցցին տեսաւ նրա կնոջը լեռնագնայ կօշիկներով ու կապոյտ բերետ դրած: Արտաքինից նա ամուսնու պէս երիտասարդ էր երեւում: Կինը գնում էր այդ երկուսի հետեւից՝ ձեռքին ձկան քանդած կարթեր: Պեդրուցցին դուր չէր գալիս, որ նա այդքան հեռու է իրենցից քայլում:

— Signorina<sup>[4]</sup>,— ձայնեց նա՝ երիտասարդին աչքով անելով,— հլա մօտ եկէք ու հետներս քայլէք: Signorina, էստե՛ղ եկէք: Եկէք միասի՛ն գնանք:

Պեդրուցցին ուզում էր, որ երեքով միասին անցնեն Կորտինոյի փողոցներով:

Կինը նրանց ետեւից քայլում էր անբաւական տեսքով:

— Signorina,— քնքուշ ձայնով կանչեց Պեդրուցցին,— եկէ՛ք, հետներս քայլենք:

Ամուսինը ետ նայեց եւ ինչոր բան գոռաց նրան՝ Վերջինս արագացրեց քայլերն ու հաւասարուեց նրանց:

Աւանի գլխաւոր փողոցով անցնելիս իրենց հանդիպած բոլոր մարդկանց Պեդրուցցին եռանդով խոնարհուում էր՝ հանելով գլխարկը:

— Buon'di, Arturo!<sup>[5]</sup>

Բանկի ծառայողը, ֆաշիստներով լեցուն սրճարանի շեմին կանգնած, հայեացքը յառեց նրան: Մի չորսհինգ մարդ խանութների առջեւ կանգնած՝ եւս սկսեցին դիտել այդ երեքի ընթացքը: Նոր կառուցուող հիւրանոցի բանուորները՝ փոշոտ բլուզներ հագին, մի պահ կանգ առած գննեցին նրանց: Ոչ ոք չէր խօսում նրանց հետ կամ խոնարհուում նրանց, բացի քաղաքում շրջող նիհար, թքից թացթաղկած մորուքով մուրացիկ ծերունուց, որ բարձրացրեց գլխարկը, երբ եռեակը հաւասարուեց իրեն:

Պեդրուցցին կանգ առաւ մի խանութի առջեւ, որի պատուհանին բազմաթիւ շշեր կային, եւ իր մաշուած զինուորական շինելի ներսի գրպանից հանեց grappa դատարկ շիշը:

— Մի պուտ գինի, մի քիչ էլ մարսալա Signoraի համար, խմելու ինչոր բան:— Նա թափահարում էր շիշը:— Համա թէ օր է, հա՛: Մարսալա, մարսալա սիրո՞ւմ էք, Signorina: Մի քիչ մարսալա՞:

Կինը անբաւական տեսք ուներ:

— Շատ պէ՞տքդ էր սրա հետ կապուելը,— ասաց նա ամուսնուն: — Ասածից բան չեմ հասկանում: Խմած է, չէ՞:

Երիտասարդը ձեւացրեց, թէ չի լսում Պեդրուցցիին, բայց միեւնոյն միջոցին մտածում էր. «Ո՞ր սատանան դրդեց ինձ մարսալա բառը բերանից թոցնելու: Չէ՞ որ դա Մաքս Բիրբոումի<sup>[6]</sup> սիրած խմիչքն է»:

— Geld<sup>[7]</sup>,— ի վերջոյ արտաբերեց Պեդրուցցին՝ բռնելով երիտասարդի թելքից:— Լի՛րա:— Նա ժպտաց՝ չհամարձակուելով համառ երեւալ, բայց եւ ցանկանալով ստիպել երիտասարդին գործելու:

Երիտասարդը գրպանից հանեց դրամապանակն ու նրան մեկնեց տասը լիրա: Պեդրուցցին աստիճաններով խանութ բարձրացաւ, որի ցուցանակին գրուած էր «Տեղական եւ արտասահմանեան գինիների վաճառք»: Խանութը փակ էր:

— Փակ է մինչեւ ժամը երկուսը,— ծաղրական տոնով ձայնեց մի անցորդ: Պեդրուցցին աստիճաններով իջաւ ցած: Նա ցաւ զգաց. «Բա՛ն չկայ,— ասաց ինքն իրեն,— «Կոնկորդիայից» կառնենք»:

Նրանք երեքով անցան փողոցով՝ ուղղուելով դեպի «Կոնկորդիա»:

Դրա շեմքին, ուր այս ու այն կողմ ժանգոտած սահնակներ էին թափթփուած, երիտասարդ վաճառողը հարցրեց նրան.

— Was wollen Sie?<sup>[8]</sup>

Պեղուցցին մի քանի տակ ծալուած տասը լիբանոցը մեկնեց նրան:

— Ո՛չ մի բան,— ասաց նա,— Դէ, հա՛, մի բան, էլի:

Նա մի տեսակ շփոթուած էր:

— Միգուցէ՛ մարսալա: Չգիտեմ: Մարսալա՛ երեւի:

«Կոնկորդիայի» դուռը ծածկուեց ամերիկացու եւ կնոջ ետեւից:

— Երեք բաժակ մարսալա,— ասաց ամերիկացին վաճառասեղանի ետեւում կանգնած աղջկան:

— Ուզում էք ասել՝ երկո՞ւսը,— հարցրեց նա:

— Ո՛չ,— ասաց երիտասարդը,— երե՛քը, մեկը vecchio<sup>[9]</sup>ի համար:

— Օ՛,— ասաց վաճառողուհին,— vecchioի համար,— եւ ծիծաղեց՝ հանելով շիշը: Յետոյ պղտոր հեղուկը լցրեց երեք բաժակների մէջ:

Կինը նստած էր պատի մօտ, որից լրագրեր կային կախուած: Ամուսինը բաժակը դրեց նրա առջեւ:

— Դո՛ւ էլ խմիր մի քիչ: Կարող է լաւ զգաս:

Կինը լուռ նայում էր բաժակին: Երիտասարդը Պեղուցցիի համար լցրած բաժակը ձեռքին դուրս եկաւ սենեակից, բայց չգտաւ նրան:

— Չգիտեմ՝ ուր գնաց,— բաժակը ձեռքին սենեակ ետ դառնալով՝ ասաց նա:

— Նա մէկ քառորդ լիտր էր ուզում,— ասաց կինը:

— Իսկ էդ քառորդ լիտրը ինչքա՞ն արժի,— հարցրեց երիտասարդը վաճառողուհուն:

— Bianco?<sup>[10]</sup>ն: Մի լիբա:

— Չէ՛, մարսալայի՛նը: Էս երկո՛ւսն էլ,— ասաց նա՝ մեկնելով նրան իր ձեռքինն ու այն, որ Պեդուցցիի համար էր լցրել: Աղջիկը ձագարով լցրեց գինին:— Հիմի շշի մեջ լցրէք, որ հետներս տանենք,— ասաց ամերիկացին:

Վաճառողուհին գնաց շիշ փնտրելու: Այս ամէնը շատ էր գուարճացնում նրան:

— Շա՛տ եմ ցաւում, որ տրամադրութիւնդ փչացաւ, Թա՛յնի,— ասաց ամուսինը:— Շա՛տ ափսոս, որ նախաճաշին էդ ձեռով հետդ խօսեցի: Ըստ էութեան նոյն բանից էինք խօսում, միայն թէ տարբեր տեսանկիւններից:

— Ի՞նչ տարբերութիւն,— ասաց կինը:— Ի վերջոյ, էդ ինձ համար ո՛չ մի նշանակութիւն չունի:

— Շա՞տ ես մրսում,— հարցրեց ամուսինը:— Մի հաստ էլ սուիտեր հագնէիր, էլի՛:

— Հագիս առանց էդ էլ երեք հաստ կայ:

Վաճառողուհին ներս մտաւ մի նեղլիկ մուգ շիշ ձեռքին ու մարսալան լցրեց դրա մեջ: Երիտասարդը եւս հինգ լիրա վճարեց: Ամուսինները դուրս եկան: Այդ ամէնը վաճառողուհուն գուարճացնում էր: Պեդուցցին, կարթածողերը ձեռքում սեղմած, վեր ու վար էր անում փողոցի ծայրին, ուր այնքան էլ քամոտ չէր:

— Գնացի՛նք,— ասաց նա:— Ե՛ւ կը տանեմ սրանք: Հե՛ջ բան էլ չկայ, եթէ մեզ մարդ տեսնի: Մեզ բան էլ չեն անի: Կորստիւնայում ինձ նեղացնող չկա՛յ: Municipio[11]ում մարդ չկայ, որ չիմանա: Ես նախկին զինուոր եմ: Էս քաղաքում բոլորն էլ սիրո՛ւմ են ինձ: Ես գորտ եմ ծախում: Ի՞նչ է, արգելուա՞ծ է ձուկ բռնելը: Թքա՛ծ ունեմ: Ախմախութի՛ւն: Բան էլ չկա՛յ: Ա՛յ, ձեզ ասում եմ, խոշոր ձկներ կան՝ ինչքան ուզէք:

Նրանք բլրից գետն իջան: Քաղաքն արդեն ետեւում մնաց: Արեւն այլեւս թաքնուել էր տամուկ երկնքում, ու անձրեւ էր մաղում:— Ա՛յ, հրե՛ն,— ասաց Պեդուցցին՝ ցոյց տալով այն նոյն տան շեմին կանգնած աղջկան, որի կողքով անցան իրենք: «Աղջի՛կս է»:

— Ի՞նչ բժիշկ,— հարցրեց ամերիկուհին,— ուզում է մեզ իր բժշկի՞ն ցոյց տալ:

— Նա ասում է՝ «daughter»,— ասաց ամուսինը:

Աղջիկը, որին մատնացոյց արեց Պեդուցցին, տուն մտաւ:

Նրանք իջան բլուրն ի վար դաշտի միջով, յետոյ շրջուեցին ու քայլեցին ափի երկայնքով: Պեդուցցին արագ էր խօսում՝ բազմանշանակ աչքով անելով: Նրանք կողք կողքի էին քայլում, եւ կինն զգաց Պեդուցցիից փշող գինու հոտը: Մի անգամ ձերուկը

նոյնիսկ արմունկով բոթեց նրան: Նա մէկ խօսում էր Ampezzo[12]ի, մէկ էլ գերմանատիրոջէան բարբառով: Նա ոչ մի կերպ գլխի չէր ընկնում, թէ դրանցից որն են իր երիտասարդ ուղեկիցները հասկանում, ուստի երկուսն էլ գործ էր ածում: Բայց երբ ամերիկացին ասաց՝ Ja, Ja[13], Պեդուցցին արդէն որոշեց անցնել տիրոջէանին: Երիտասարդն ու կինը ոչինչ չհասկացան:

— Երբ անցնում էինք քաղաքով, բոլորն էլ մեզ տեսան՝ կարթերը ձեռքներին: Երեւի հիմի արդէն գետապահպան ջոկատը հետեւում է մեզ: Երանի էս գրողի տարած պատմութեան մէջ չխրուէինք: Էս հարբած ապուշն էլ՝ գլխներին մի ուրի՛շ կրակ:

— Իսկ քեզ, իհա՛րկէ, քաջութիւնդ չի հերիքում, որ ուղղակի ետ դառնաս ու՛ վերջ,— ասաց կինը:— Անպայման պիտի շարունակես հետը գնալ:

— Բա դո՛ւ ինչի՞ չես ետ դառնում: Գնա՛, Թա՛յնի:

— Ես մնո՛ւմ եմ քեզ հետ: Դէ՛, եթէ բանտ ընկնելու լինես, գոնէ երկուսով կը լինենք:

Նրանք կտրուկ ցած իջան ափով, եւ Պեդուցցին կանգ առաւ՝ ձեռքերով յուսահատ շարժումներ անելով ու ցոյց տալով գետը: Նրա վերաբերուն ուռել էր քամուց: Ջուրը կեղտոտ էր ու պղտոր: Ափի աջ կողմում աղբ էր կիտուած:

— Դէ՛, իտալերէն խօսէք, էլի՛,— ասաց երիտասարդը:

— Un' mezz' ora. Piu d'un' mezz' ora.[14]

— Ասում է, թէ առնուագն մի կէս ժամ էլ դեռ կայ գնալու: Լաւ է գնա՛ւ, Թա՛յնի: Դու առանց էդ էլ էս քամուն լաւ սառեցիր: Զգուելի եղանակ է, ու մէկ է՝ ոչ մի հետաքրքիր բան էլ չի լինի:

— Լա՛ւ,— պատասխանեց կինը եւ սկսեց բարձրանալ խոտածածկ ափով: Պեդուցցին ներքեւում էր՝ գետի մօտ, եւ միայն այն ժամանակ նկատեց կնոջը, երբ վերջինս արդէն անցնում էր բլրի կատարից:— Frau![15],— գոռաց նա:— Frau, Fräulein![16]: Էդ ի՞նչ է, գնո՛ւմ էք:

Ամերիկուհին չքացաւ բլրի ետեւում:

— Գնա՛ց,— ասաց Պեդուցցին: Նա յուզուած էր:

Նա քանդեց ռետինէ քուղերը, որոնցով կապուած էին կարթաձողերն, ու սկսեց հաւաքել դրանցից մէկը:

— Բայց չէ՞ որ ասացիք, որ մի կէս ժամ էլ կայ գնալու:

— Հա՛, հա՛: Էնտեղ շատ լաւ է: Բայց էստե՛ղ էլ վատը չի:

— Իսկապէ՛ս:

— Բա ո՛նց: Էստե՛ղ էլ է լաւ, էստե՛ղ էլ:

Երիտասարդը նստեց ափին, հաւաքեց կարթածողը, հարմարեցրեց կոճն ու ձգեց կարթաթելը օղակի միջով: Նա մի տեսակ անհանգիստ էր ու վախենում էր, թէ ամէն պահի կարող է յայտնուել գետապահպան ջոկատը, կամ թէ ափին կ'յայտնուի տեղացիների ամբոխը: Նա տեսնում էր քաղաքի տներն ու կամպանիլան՝ բրի ծայրին: Նա բացեց կարթաթելերի տուփը: Պեղուցցին կռացաւ, այնտեղ մտցրեց գոսացած մատն ու ցուցամատը եւ իրար միացրեց թաց կարթաթելերը:

— Իսկ դուք սուգագնդիկ ունե՛ք:

— Չէ՛:

— Դուք դրանից պիտի՛ ունենաք:— Պեղուցցին յուզուած էր:— Առանց *riombo*[17]ի հնարաւոր չէ: *Piombo*: Ընդամենը մի քանի գնդակ: Հրե՛ս, ա՛յ: Ա՛յ, էստեղ հենց կեռի տակ, թէ չէ խայծը կը լողայ ջրի երեսին: Անպայման *riombo* է պէտք: Թէկուզ մի պուճուռ կտոր:

— Իսկ ձեզ մօտ կա՞յ:

— Չէ՛:— Նա սկսեց տենդագին տնտղել գրպանները:— Մի հատ էլ չկայ: Առանց *riombo*ի չի՛ լինի:

— Դէ, ուրեմն, որսալ չի՛ լինի,— ասաց երիտասարդը ու քանդեց կարթածողը՝ ետ տալով կարթաթելը օղակի միջով:— *Piombo* կը ճարենք ու ձուկն էգուց կը բռնենք:

— Բայց, հլա լսե՛ք, *caro*[18], ձեզ մօտ պիտի որ *riombo* լինի: Թէ չէ կարթաթելը կը լողայ ջրի երեսին:— Պեղուցցիի այքի առաջ ամէն ինչ խորտակուում էր:— Ձեզ մօտ պիտի՛ որ *riombo* լինի: Մի՛ կտորն էլ հերիք է մեզ: Կարթաթելերը լրիւ նոր են, իսկ, ա՛յ, արճի՛ճ չկայ: Ինձ որ մնար՝ ես կը բերէի: Բա դուք ասում էիք, թէ ձեզ մօտ ամէն ինչ կայ:

Երիտասարդը նայում էր հալչող ձիւնից պղտոր դարձած հոսանքին:— Դէ ի՞նչ,— ասաց նա,— մի քիչ արճիճ կճարենք ու էգուց որսի դուրս կը գանք:

— Ասում էք՝ առաւօտը, ո՞ր ժամին: Հլա ասե՛ք:

— Եօթին:

Արելը դուրս էլաւ: Օրը տաք ու հաճելի դարձաւ: Երիտասարդը մի տեսակ թեթեւութիւն զգաց: Նա այլեւս ոչ մի օրէնք էլ չէր խախտում: Նստելով ափին՝ նա

գրպանից հանեց մարսալայի շիշն ու մեկնեց Պեդուցցիին: Պեդուցցին ետ տուեց այն: Ամերիկացին մի կուս արաւ ու փոխանցեց Պեդուցցիին: Սա կրկին այն տուեց երիտասարդին:— Խմէ՛ք,— ասաց նա,— խմէ՛ք: Ձեր մարսալան է սա:— Մի կուս եւս անելով՝ ամերիկացին շիշը մեկնեց նրան: Պեդուցցին ուշադիր գննում էր, յետոյ շտապով վերցրեց այն ու գլխին քաշեց: Վզի ծալքերի ճերմակ մազմզուկները թրթռացին, երբ նա խմում էր գինին՝ աչքերը նեղլիկ գորշ շշին հառած: Նա շիշը լրիւ դատարկեց: Քանի դեռ խմում էր, արեւը սկսեց շողալ: Հրաշալի էր շուրջը: Յամենայն դէպս յաջող օր էր: Սքանչելի՛ օր:

— Senta, caro: Ուրեմն, էգուց՝ առաւօտը եօթին: Նա երիտասարդին մի քանի անգամ caro ասաց, ու լաւ էլ ստացուեց: Ա՛յ թէ լաւ մարսալա է, հա՛: Էդպիսի օրեր առջեւում դեռ էնքա՛ն կան, իսկ սկիզբը վաղն է, ժամը եօթին:

Նրանք սկսեցին բլրով բարձրանալ՝ քաղաքի ուղղութեամբ: Ամերիկացին առջելից էր գնում: Նա գրեթէ բլրի կատարին էր, երբ Պեդուցցին ձայն տուեց.

— Լսէ՛ք, caro: Բարի չէի՞ք լինի ինձ հինգ լիրա տալ:

— Էսօրուա՛յ համար,— խոժոռուած հարցրեց երիտասարդը:

— Չէ՛, էսօրուայ համար չէ: Էսօր տուէք էգուցուայ համար: Կառնեմ ինչ որ պէտք է: Pane salami, formaggio, լաւ նախաճաշ կը լինի երեքիս համար էլ: Դուք, ես ու Signora՛ն: Խայծ, մատղաշ օձաձուկ, հո միայն որդերը չեն: Կարող է՛ մի քիչ էլ մարսալա ճարեմ: Ու էդ բոլորը՝ հինգ լիրայով: Հինգ լիրա, հը՞, սինյոր:

Երիտասարդը փորփրեց դրամապանակը եւ հանեց երկու լիրանոց մէկ թղթադրամ ու երկու հաս էլ մեկանոց:

— Շնորհակա՛լ եմ, caro: Շնորհակա՛լ եմ,— ասաց Պեդուցցին այնպիսի տոնով, որով խօսում են «Կարլտըն Քլաբի» անդամները՝ հարեւանի ձեռքից «Մորնինգ փոստը» վերցնելիս: Ա՛յ թէ կեանք է, հա՛: Դէ էլ հերի՛ք եղաւ եղանով հիւրանոցի բակի սառած աղբը փորփրել: Կեա՛նք է բացում իր առջեւ:

— Դէ՛, ուրեմն մինչեւ ժամը եօ՛թը, ca՛ro,— ասած Պեդուցցին՝ թփթփացնելով երիտասարդի ուսը:— Ուղի՛ղ եօթին:

— Ես երեւի թէ չգամ,— ասաց երիտասարդը եւ դրամապանակը նորից գրպանը դրեց:

— Ո՞նց,— հարցրեց Պեդուցցին,— ես օձաձուկ կը բերեմ, Signor: Salami, ամէն ինչ: Դո՛ւք, ե՛ս ու Signora՛ն: Էս երե՛քս:

— Ես երեւի թէ չգամ,— կրկնեց երիտասարդը,— ամենայն հաւանականութեամբ չէ: Հիւրանոցի Padroneից կիմանաք էդ մասին:

1. cantina (իտալ.) — փոքրիկ պանդոկ, գինետուն
2. grappa (իտալ.) — խաղողի օղի
3. musette (իտալ.) — պայուսակ
4. Signorina (իտալ.) — սինյորինա
5. Buon' di, Arturo! (իտալ.) — Բարի օր, Արթուր:
6. Մաքս Բիրբոնու (1872—1956) — անգլիայի քննադատ եւ ծաղրանկարիչ
7. das Geld (գերմ.) — դրամ
8. Was wollen Sie? (գերմ.) — Ի՞նչ էք ուզում:
9. vecchio (իտալ.) — ծերունի
10. bianco (իտալ.) — այստեղ՝ սպիտակ գինի
11. Municipio (իտալ.) — քաղաքապետարան
12. d'Ampezzo — իտալերէն լեզուի բարբառ
13. Ja, Ja (գերմ.) — Հա՛, հա՛:
14. Un' mezz' ora. Piu d'un' mezz' ora (իտալ.) — Կէս ժամ: Կէս ժամից շատ:
15. Frau (գերմ.) — տիկին
16. Fräulein! (գերմ.) — օրիորդ
17. piombo (իտալ.) — արճիճ, կապար
18. caro (իտալ.) — սիրելի